ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 715-Ա « 31 » մարտի 2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի N 1993-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետի 2017 թվականի հունիսի 13-ի «Երևանի քաղաքապետի կողմից գործակարգավարական խորհրդակցությունների անցկացման մասին» N 1993-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Սահմանել, որ յուրաքանչյուր շաբաթ Երևանի քաղաքապետարանում (Երևանի Արգիշտիի փողոցի հ.1 հասցեում գտնվող Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի 5-րդ հարկի նիստերի դահլիճում) անցկացվում է գործակարգավարական խորհրդակցություն, որը վարում է Երևանի քաղաքապետը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալը կամ Երևանի քաղաքապետի տեղակալներից մեկը:».

2) Որոշման N 1 հավելվածի 36-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«36. Սպորտի և երիտասարդության հարցերի վարչության պետ».

3) Որոշման N 1 հավելվածի 37-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441